ինքն գերմանացւոց հին օրէնսդրութեանց պատմութիւնը չիներ է գիտնական կերպով մը... Հեղինակին ջանքը, զգուշաւոր գրուածքը, ու յաջողակութիւնը ամէն երես յայտնի կը տեսնուի... հոս մեր վախճանը ան էր որ օտարականի մը, որնոր ազգայինէ մը աւելի շատ մեծ դժուարութիւններու յաղթած է աս գործքիս մէջ՝ դժուարին ջանքին արժանի եղած երախտագիտութիւններս ցուցնենք: Աս երախտագիտութիւնը արդէն Բրուսիայի թագաւորին ու Պերլինի գիտութեանց ճեմարանին կողմէ ըստ բաւականին հատուցուած է [159]»:

Պոլսոյ Հայաստան յաջորդ տարին [160] կը տեղեկագրէր. «Տաւուտեան արգոյ գիտնական Պ. Կարապետ, որն որ երկայն ժամանակ Օսմանեան տէրութեան կողմանէ Պերլինի մէջ թարգմանի կամ գործակալի պաշտօն կատարելով՝ իբրեւ քաղաքագէտ անձ՝ մեծ անուն ստացած էր, մէկ երկու տարի յառաջ գերմանացւոց հին օրինաց վրայ գրած գրքովը գիտնոց առջեւն ալ իբրեւ գրագէտ մեծ պատիւ ստացաւ: Պերլինի համալսարանը իր արդիւնքը վարձատրելու ու իր գրքովը Գերմանիայի ըրած ծառայութեանը փոխարէն մը ընելու համար, աս օրերս զինքը համալսարանին պատուոյ անդամ ընտրեց, թագաւորն ալ աս ընտրութիւնը հաստատեց»:

1848ին Վիեննայի Donau Zeitung Կարապետ Տաւուտեանի Բերլինի թրքական դեսպանատան մէջ լիակատար իշխանութեամբ գործակալ անուանուելու առթիւ հետեւեալը կը գրէր. «Հանճարեղ ու բազմահմուտ Հայազգի Պ. Տավուքեանը, որ գերմաներէն լեզուաւ [161] պատմական եւ իրաւագիտական երեւելի գործք մը շարադրած է, եւ շատ տարի Պերլինի Օսմանեան դեսպանատան մէջ քարտուղարութեան պաշտօնը կատարած է, հիմա Դրան կողմանէ լիակատար իշխանութեամբ գործակալ անուանուեր է ու Պերլին կու գայ [162]»:

Վերջապէս Atheneum անգլիերէն թերթը Վսեմ. Կարապետ Արթին Տաւուտ Փաշայի Թուրք Պետութեան Խորհրդարանին անդամ, Հանրօգուտ շինութեանց նախարար եւ հեռագրատանց ու նամակատանց վերատեսուչ ընտրուիլը առթի առնելով՝ ըսելէ յետոյ թէ ան արդէն աշխարհահռչակ անուն մ'ունէր՝ անոր գրքին վրայ իր հիացումը կը յայտնէ. «Օսմանեան դրագէտի մը ձեռքէն ելլելուն պատճառաւ, կ'ըսէ, ա'լ աւելի մեծ անուն հանած է»: Ու կ'աւելցնէ. «Արեւելքցի դրագէտի մը Անգլո-Սաքսոն կամ բնիկ Գերման զրոյցներուն ու կարծիքներուն մեկնութիւն տալը խսկապէս զարմանալու արժանի բան մը կ'երեւայ [163]»:

(Շարունակելի:) Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԵԶՈՒԻՆ ՏՈՀՄԻ ԵՒ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅՑ ԼԵԶՈՒԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

(Շարունակութիւն:)

Ալէքսանդր Ա. կայսեր օրով (1801—1825) նոյնպէս նուաճողական քաղաքականութիւնը դէպի Արեւելեան Հայաստան երկար ժամանակ կանգ առաւ: Յայտնի է, որ այս կայսեր ամբողջ ուշադրութիւնը ուղղուած էր դէպի Արեւմտեան Եւրոպա, դէպի Նապոլէոն Ա. կայսեր նուաճումները Միջին Եւրոպայում, որոնք ի վերջոյ հանգեցին 1812 թ. ռուս-ֆրանսական պատերազմին:

Այսու հանդերձ այս կայսրն էլ շարունակեց արդէն պատմական աւանդութիւն դարձած քաղաքականութիւնը՝ հովանաւորութիւն ու բարեհաճ վերաբերմունքը դէպի Հայերը: Այս տեսակէտից ուշագրաւ է այն հրովարտակը, որը նա ուղղել էր Վրաստանի հայերին 1813 թ. սեպտեմբեր 16ին:

Այս հրովարտակը արդիւնք էր հետեւեալ դէպքերի.

1804 թ. իշխան Ցիցեանովն ու զօրավար Գուդովիչը յարձակում գործեցին Գանձակի վրայ ու Ջարդ տուին պարսիկներին: Այս յաղթանակով Գանձակի խանութիւնը անցաւ ռուսական իշխանութեան ներքոյ:

Այնուհետեւ 1804—1813 թ. մի շարք կռիւներ մղուեցին Երեւանի խանութեան դէմ, Երեւանը նուաճելու նպատակով. դժբախտաբար, ակնկալուած յաջողութիւնը չունեցան այդ կռիւները:

Այս բոլոր կռիւների ժամանակ Հայերը ոչ միայն մնացին հաւատարիմ Ռուսաստանին, այլ եւ զէնքով բերին իրենց թանկագին օժանդակութիւնը:

Թէ՛ Ցիցեանովը, — վկայում է Պօտտոն — որ «առանձին մեծ ատելութիւն էր զգում դէպի հայերը», եւ թէ՛ բոլոր Ռուս զօրավարներն ու հրամանատարները «միաձայն վկայեցին իրանց օրով Հայոց կատարած մեծամեծ յաղթութիւնների մասին»: Բոլշչեւը գրում է, որ Կախէթիի խռովարար ապստամբութիւնների ժամանակ, հայ Ազգը, որ Վրաստանի մարդաբնակութեան նշանաւոր մասն է կազմում, անյողդողդ մնաց հաւատարմութեան մէջ եւ զոհելով իր կարողութիւնը, մինչեւ կեանքն ելս, կռուեց ապստամբների դէմ եւ բազմիցս ապացուցեց իւր քաջութիւնն եւ անկեղծ անձնուիրութիւնը» (Պօտտо, էջ 12):

Այս զեկուցումների հիման վրայ էր, որ կայսրը յիշեալ հրովարտակը յայտարարեց եւ որի մէջ ասուած էր.

«Վրաստանում բնակուած իմ սիրելի եւ հաւատարիմ հպատակ Հայ Ազգին: Հայերը ցոյց են տուել իրենց մշտական խաղաղասիրութիւնն եւ հաւատարմութիւնը, երբ թեթեւամտութիւնն ու չարամտութիւնը ջանում էին ի զուր տեղ խախտել մեր կողմից Վրաստանում հաստատուած հանգիստն, ու խռովայոյզ պայմաններում մնացին ամուր եւ անսասան իրենց պարտաճանաչութեան մէջ դէպի մեզ եւ դէպի մեր գահը, զոհաբերելով իրենց ստացուածքը, իրենց կարողութիւնները եւ նոյն իսկ իրենց կեանքը յօգուտ մեր ծառայութեան եւ ընդհանուրի բարիքի: Նման պարտաճանաչութիւն Վրաստանի Հայերի, նրա բոլոր դասակարգերի կողմից ցուցադրուած, նրանց ծառայութիւնները ու սխրագործութիւնները մեզ վրայ դնում են հաճելի պարտականութիւն վկայելու ամբողջ աշխարհի առաջ մեր արդարացի երախտագիտութիւնն ու բարեհաճութիւնը: Թո՛ղ այս վկայութիւնը պահպանուի ի փառս եւ ի պատիւ նրանց եւ ի յիշատակ գալոց սերունդների»:

Այնուհետեւ 1813 թ. հոկտեմբեր 12ի Գիւլիստանի դաշնագրով Պարսկաստանը զիջեց Ռուսաստանին՝ Նուխին, Շամախին, Ղարաբաղի, Թալիշի, Բաքուի, Ղուբայի ու Դերբէնդի խանութիւնները: Այս շրջաններում հայութիւնը կազմում էր տեղական ազգաբնակութեան ստուար մասը:

Միաժամանակ նոյն այդ դաշնագրով հաստատուեց, որ Ռուսաստանի սեփականութիւնն են կազմում Դաղստանը, Վրաստանը, Իմերեթիան, Գուրիան, Աբխազիան եւ Շօրագեալը, այսինքն՝ գրեթէ ամբողջ Անդրկովկասը, բացի Երեւանի ու Նախիջեւանի խանութիւններից:

Նշանակալից է մասնաւորապէս հերոսական Ղարաբաղի ազատագրութիւնը, այն Ղարաբաղի, որ մի դարուց աւել կատաղի կռիւներ էր մղել Պարսկաստանի դէմ, անթիւ զոհեր տուել ու աննկարագրելի տառապանքներ կրել...:

Պատմութիւնը ունի իր առեղծուածական երեւոյթները:

Անդրկովկասի ազատագրութիւնը վիճակուեց կատարելու Ռուսաստանի մի կայսեր՝ Նիկոլայ առաջինին (1825—1855), որ հոգով, սրտով ու մտքով հակառակ էր ամէն ազատութեան եւ որը իր երկրում եղաւ ամէն ազատութեան դահիճը...:

Հետեւաբար, բնական էր, որ նա եւ Անդրկովկասի ազատութիւնը չարդարացրեց Հայ ազատագրական շարժման ռահվիրաների՝ Իսրայէլ Օրիի, Յովսէփ Էմինի, Յովհաննէս Լազարեանի, Յովսէփ Արղութեանի փայփայած վառ երազները՝ ունենալ ազատ եւ անկախ Հայաստան Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ:

Ճիշտ է, որ Հայ ժողովրդի սիրտը չահելու համար այդ նոյն կայսրը հրամայեց Երեւանի եւ Նախիջեւանի խանութիւնները անուանել «Նահանգ Հայոց եւ մուծանել զայն ի մականունս մեր», բայց եւ այնպէս, նախ, դա չափազանց քիչ էր համեմատած ամբողջ մի դար Հայերի ակնկալած ազատութեան հետ, երկրորդ, այդ «Հայոց Նահանգը» իր վարչական կարգերով ոչնչով չէր տարբե-

---

[159] Հմմտ. Աբրահամ Յ. Այվազեան, Շար հայ կենսագրութեանց, կ. Պ. 1893, էջ 161: Աբշալոյս Արապատեանի խմբագրութիւնը նոյն տեղ իր կողմէ ալ կը գրէր. «Մեր ազգայնոց ամէն բանի ճարտար ըլլալուն ազէկ օրինակ մը կրնայ ըլլալ աս գրքին հեղինակը, որ գաղղիերէն լեզուաւ առանկ դժուարին նիւթի մը վրայ իր գիրքը գրեր է: Աւիկայ մեր ազգին մեծ պարծանք կը սեպենք»:

[160] Անդ՝ 1847, թ. 9—62:

[161] Տաւուտեան իր գիրքը Ֆրանսերէն գրած է: Եւրոպայի գրածին նայելով (1848, թ. 21 ծանօթ.) կրնայ ըլլալ որ գերմաներէն թարգմանութիւն մ'ալ եղած ըլլայ:

[162] Եւրոպա, Վիեննա 1848, թ. 21: Եւրոպա իր կողմէ կ'աւելցնէ. «Աս համառօտ հատուած՝ ինչպէս մեր, նոյնպէս ամէն հայրենասէր անձանց սրտին ալ պէտք է որ մեծ ուրախութիւն պատճառէ, որովհետեւ աս պատուական անձին ընդունած պաշտօնէն ու երեւելի լրագրի մը իր վրայ աս կերպով խօսելէն յայտնի կը տեսնուի որ ինքն իր խոհեմ եւ իմաստուն վարմունքովը, գիտնական եւ ուսումնասիրական փայթովը եւ մեծ ու աշխատալի երկասիրութեամբը թէ՛ բարձրագոյն Դրան եւ թէ՛ Եւրոպայի գիտնոց առջեւը ինչ մեծ յարգ ու համարում ստացած է»:

[163] Մէնմուայը Հավատիս, 1868, թ. 748:

© National Library of Armenia

բուում մի Վորոնէժի նահանգում տիրող ռա-տիկանական կարգերից···:

Նիկոլա կայսրը երկու պատերազմներից յետոյ Պարսկաստանի հետ՝ 1826—1828 թ. եւ Տաճկաստանի հետ՝ 1828—1829 թ. միայն նուաճեց ամբողջ Անդրկովկասը:

Ռուս-պարսկական պատերազմը, կոմս Պասկեւիչի գլխաւոր հրամանատարութեան ներքոյ, սկսուեց ու տարուեց շատ յաջող: Պարսկաստանը, որ Նադիր-Շահից յետոյ մխրճուել էր ներքին երկպառակութիւնների մէջ, արդէն վաղուց կորցրել էր իր զիմադրական ոյժը· պետութեան հիմերը արդէն փտել էին ու քայքայուել: Ռուս-հայկական ուժեղ զրոհի տակ՝ նախ 1827 թ. հոկտեմբեր մէկին ընկաւ Երեւանը, որ համարուում էր մի անառիկ բերդ, այնուհետեւ Պարսիկները նահանջեցին մինչեւ Թեհրան: Ռուս զօրքը հետապնդեց եւ պատրաստ էր արդէն անցնել մինչեւ Թեհրան ու այն եւս գրաւել, երբ Պարսիկները հաշտութիւն խնդրեցին, որը եւ կնքուեց Թուրքմանչայում 1828 թուին: Ըստ այս դաշնագրի Պարսկաստանը զիջեց Ռուսաստանին Արաքս գետի ձախակողմեան ամբողջ հողամասը, ուրիշ խօսքով՝ Երեւանի եւ Նախիջեւանի խանութիւնները:

Մեր այս ներածական համառօտ տեսութեան սահմաններից ի հարկէ դուրս է այդ պատերազմի մանրամասն նկարագրութիւնը, բայց եւ այնպէս չենք կարող չնկատել, որ հայ ժողովուրդը, Ներսէս Աշտարակեցու անձնազոհ առաջնորդութեամբ եւ յորդորներով[29] նեռուեց պատերազմի դաշտը մեծ խանդավառութեամբ եւ բերեց մեծ օժանդակութիւն Ռուսաց զօրքին պատերազմի ամբողջ ընթացքում, չխնայելով ոչ իր զոյքն եւ ոչ էլ իր կեանքը: Հայ ժողովուրդը խորապէս գիտակցում ու զգում էր, որ հասել է ժամը, երբ վերջապէս պիտի խորտակուի Ասիական բռնապետութիւնների իշխանութիւնը եւ պիտի թօթափի իրենից դարերի դաժան լուծը···: Նա պարզ նախատեսնում էր, որ ապրում է մի վճռական պատմական մոմենտ, որից յետոյ նրա կեանքը հիմնովին պիտի փոխուի եւ պիտի սկսի մի նոր դարաշրջան՝ խաղաղ ու ապահով կեանքի ժամանակաշրջան: Եւ հետեւելով իր հոգեւոր

մեծ առաջնորդին, ոչինչ չխնայեց Ռուսական զէնքի յաջողութեան համար: Յայտնի է նաեւ, որ Ներսէսի կողքին գործում էր նաեւ Գրիգոր Մանուչարեանց եպիսկոպոսը իր հեծելազունդով եւ ցուցադրել էր մեծ քաջագործութիւններ, որոնց համար ստացել էր Ս· Գէորգի, Ս· Վլադիմիրի եւ Ս· Աննայի շքանշանները:

Այս պատերազմը ունեցաւ նաեւ մի այլ խոշոր հետեւանք· Պարսկաստանից Արեւելեան Հայաստան գաղթեցին 40·000 Պարսկահայեր զնդապետ Ղազար Լազարեանի առաջնորդութեամբ եւ հաստատուեցին գլխաւորապէս Երեւանի եւ Նախիջեւանի նախկին խանութիւններում:

Այս գաղթի ընդհանուր նկարագրութիւնը տրուած է ստորեւ՝ զնդապետ Ղազար Լազարեանի կենսագրականի մէջ, ուստի այդ տեղ կանգ չենք առնում այդ նշանաւոր դէպքի վրայ:

Ռուս-Տաճկական պատերազմը 1828-1829 թ· մղուում էր երկու ճակատներում՝ Բալկաններում՝ զօրավար Դիբիչի հրամանատարութեան տակ, եւ Արեւելեան Հայաստանի ռուս-տաճկական սահմանագծում՝ կոմս Պասկեւիչի հրամանատարութեան ներքոյ:

Երբ զօրավար Դիբիչը գրաւեց Վառնա եւ Շումլա ամրոցները եւ յետոյ Ադրիանուպոլիս քաղաքը, իսկ կոմս Պասկեւիչը նուաճեց Կարս եւ Ախալցխա ամրոցներն եւ ապա Էրզրում քաղաքին տիրեց, Տաճկաստանը հարկադրուեց տեղի տալ եւ հաշտութիւն խնդրել: 1829 թ· Ադրիանուպոլիս քաղաքում կնքուեց հաշտութեան դաշնագիրը, ըստ որի Դանուբ գետի ստորին հոսանքի ձախ կողմը եւ Սեւ ծովի արեւելեան ափերը (Կուբան գետի բերանից դէպի հարաւ եւ Ախալցխա իր շրջանով), այսինքն՝ Անապան եւ Փոթին եւ ապա Ախալցխան ու Ախալքալաքը անցան Ռուսների ձեռքը:

Բացի այդ Մոլդաւիան, Վալախիան ու Սերբիան հռչակուեցին ինքնավար երկիրներ Ռուսաստանի հովանու տակ· Յունաստանը յայտարարուեց անկախ թագաւորութիւն:

Այս պատերազմի ընթացքում Հայերը իրը 100·000 հոգի գաղթեցին Կարինի (Էրզերում) շրջանից, Կարինի Կարապետ եւ Կարսի Ստեփան եպիսկոպոսների առաջնորդութեամբ: Այս գաղթականութիւնը լցրեց Արաքսի ամայի ու աւեր հովիտը աշխատա-

[29] Դեռ 1826 թ. Ներսէս Աշտարակեցին գրում էր պատերազմաշունչ շրջաբերականներ ժողովուրդի մէջ, ասելով՝ «Դիմադրեցէք թշնամուն եւ սորա արբանեակներին, կամ Ռուսաց զօրքի հետ միասին եւ կամ թէ ուրիշ կերպ, որ աւելի յարմար կը լինի· իսկ եթէ հարկ լինի մի խնայէք ձեր արեան վերջին կաթիլը»:

սէր եւ ստեղծագործ կորովով օժտուած խաղաղ հայ ազգաբնակութեամբ:

Կարինից մասնաւոր գաղթը սկսուեց 1829 թ· հոկտեմբեր 14ին, իսկ ընդհանուր գաղթը՝ 1830 թ· մայիսից:

Այդ գաղթով Կարինի ամբողջ շրջանը գրեթէ դատարկուեց հայ ազգաբնակութիւնից, ամայացաւ ու մատնուեց անտեսական տագնապի:

Ռուս կառավարութիւնը եւ զինուորական իշխանութիւնը ամէն կերպ օգնում էին ու խնամք տանում գիւրացնելու եւ անվտանգ պահելու Հայերի ելքը· տրամադրեցին որոշ զօրամասեր ուղեկցելու գաղթողներին եւ պաշտպանելու նրանց Քուրդերի հաւանական յարձակումներից, տուեցին սայլեր փոխադրելու անկարողներին եւ զոյքը, բաժանում էին հաց· ցոյց տուին նաեւ զրամական օժանդակութիւն՝ իբր 20·000 ոսկի փոխարինարար, հետաղայում մաս-մաս վերադաձնելու պայմանով:

Ըստ Ա· Երիցեանի տուած տեղեկութիւնների[30], Տաճկահայաստանից գաղթել էին·

Արզրումի Փաշայութիւնից · · · · ·	7·298	*դերդաստան*
Արդահանից · · · ·	67	*„*
Կարսի Փաշայութիւնից · · · · ·	2·467	*„*
Բայազէթի Փաշայութիւնից · · · · ·	4·215	*„*
ընդամէնը	14·047	*դերդաստան*

Եթէ հաշուելու լինենք, որ ամէն մի դերդաստան բաղկացած էր 8 հոգուց, որ չի կարելի այն ժամանակուայ հայ նահապետական ընտանիքի համար համարել բարձր թիւ, կը ստանանք՝ 112·352 հոգի, որը միանգամայն համապատասխանում է բոլոր մեր պատմիչների մատնանշած ընդհանուր թուին՝ հարիւր հազար հոգու:

Արզրումցիք բնակուեցին Ախալցխա եւ Ախալքալաք քաղաքներում եւ նրանց շրջակայ գիւղերում:

Կարսեցիք ընտրեցին Գիւմրի (Ալէքսանդրոպոլ-Լենինականը), Արագածի լանջերը, Ապարանն ու Թալինը:

[30] *Տես Ա· Երիցեան, «Ամենայն Հայոց կաթուղիկոսութիւնը եւ Կովկասի Հայք 19րդ դարում»: Հատոր Ա· եւ Բ·: Թիֆլիս 1895 թ·:*

Բայազէթցիք՝ Սեւանայ լճի կողմերը, Դարաչիչաղ եւ մասամբ Սուրմալու[31]:

Այս պատերազմի ժամանակ էլ հայ ժողովուրդը բերել էր իր գործօն մասնակցութիւնն եւ ցուցադրել մեծ քաջագործութիւններ:

«Հէնց որ ռուս-տաճկական պատերազմը սկսուեց, գրում է մի ռուս հեղինակ, Տաճկահայերի մէջ ծնունդ առաւ ուրախութեան յուզմունք: Բարձր Դուռը (Թիւրքիան) սահմանակից շրջաններից Հայերին փոխադրեց հեռաւոր վայրեր, բայց դրանով դժուար էր արդելք լինել Հայերին արտայայտելու իրենց համակրանքը Ռուսաստանին: Որքան ռուս զօրքերը առաջ էին ընթանում, այնքան աւելի վճռական կերպով էին Հայերը արտայայտում խօսքով ու գործով իրենց համակրանքն ու աջակցութիւնը: Հայերից կազմուել էին կամաւոր գնդեր, որոնց վրայ մի առանձին կատաղութեամբ էին յարձակուում տաճիկ զինուորները: Բայց Հայերը շարունակում էին անխախտ արտայայտել իրենց ջերմ հաւատարմութիւնը Ռուսաստանին: Ի դէմս Հայերի, կոմս Պասկեւիչի վկայութեամբ, ռուս զօրքերը դտան «բաջ զինակիցներ եւ ջերմեռանդ մասնակիցներ»: Նրա պաշտօնական հաղորդագրութիւնից երեւում է, որ Բայազէթում 2000 Հայեր կռուել են ռուս զօրքի շարքերում· Ղարսում 800 հոգի ձիաւորներ պաշտպանում էին ռուսական սահմանը եւ, վերջապէս երբ ռուս զօրքերը հասան Էրզրում, ամբողջ հայ ազգաբնակութիւնը ընդունեց նրանց խանդավառ ցոյցերով[32]»:

*

Անդրկովկասի նուաճումով, Սեւ, Ազով ու Կասպից ծովերի եզերքի գրաւումներով, որոնք տեւեցին մէկ դարուց աւելի, Ռուսաստանի պետական ծաւալումը դէպի Հարաւ-Արեւելք կանգ առաւ: Այժմ հերթը հասել էր հիւսիսային Կովկասի լեռնականներին՝ Չերքէզներին, Չէչէններին եւ այլոց խաղաղացնելու: Նիկոլա Ա·ի ամբողջ թագաւորութեան ընթացքում անընդհատ կռիւներ էին մղուում նրանց դէմ:

Հիւսիսային Կովկասը խաղաղուեց, ըմբոստ լեռնականների դիմադրութիւնը զսպուեց միայն Ալէքսանդր Բ·ի օրով 1864 թ·,

[31] *Անդ:*

[32] *Տե՛ս Զանչեանի «Եզր· Օգնութիւն», էջ 653:*

© National Library of Armenia

երբ լեռնականների առաջնորդ հռչակաւոր Շամիլը անձնատուր եղաւ 1859 թ. եւ ապստամբութեան թափը հետզհետէ կորուեց եւ երկիրը վերջնականապէս խաղաղուեց:

Նիկոլա Ա. կայսրը, Անդրկովկասի նուաճումից յետոյ, անմիջապէս ձեռնամուխ եղաւ այդտեղ ռուսական պետական կարգերն հաստատելու եւ օրէնքներ մտցնելով, կազմակերպելու վարչութիւնը:

Այդ աշխատանքների մէջ ամենից նշանաւորը եղաւ 1836 թ. «Պոլոժենիէն[33], որը կայսրը հաստատեց յատուկ հրովարտակով նոյն թուի մարտ 11ին եւ ապա անմիջապէս գործադրութեան դրուեց:

Պիտի ասել, որ նման մի վարչական կանոնագրի մշակման անհրաժեշտութեան գաղափարը Հայ լուսաւորչական եկեղեցու համար առաջին անգամ յղացել էր ապա Մինաս Լազարեանը՝ Դաւիթ-Դանիէլեան տխուր վէճի ծանր տպաւորութեան տակ, մի վէճ, որ տեւեց մօտ վեց տարի՝ 1801 թուից մինչեւ 1807 թ. եւ որը Ա. Երիցեանի վկայութեամբ, «ազգիս ընդհանրապէս, եւ Աթոռին գլխաւորապէս, մեծամեծ վնասներ պատճառեց»:

1805 թ. Մինաս Լազարեանը գրել էր Աստրախան Եփրեմ եպիսկոպոսին եւ Թիֆլիս Յովհաննէս Գեղարքակրին եւ առաջարկել, որ սրանք համոզեն Դանիէլ կաթուղիկոսին, որպէս զի էջմիածնում մի «սինհոդոսարան» հաստատէ իր նախագահութեամբ եւ որոշ կանոններով կառավարէ Եկեղեցոյ վարչական գործերը եւ այդպիսով վերջ տրուի այն տխուր ու խայտառակ անցքերին, որոնք կատարւում էին էջմիածնում[34]:

Այժմ, երբ ամբողջ Արեւելեան Հայաստանը սկսել էր իր խաղաղ կեանքը եւ գտնուում էր կոմս Պասկեւիչի վերին կառավարութեան ներքոյ, նոյն մարդին է դալիս նաեւ ինքը Պասկեւիչը եւ առանց յապաղելու Հայոց եկեղեցոյ վարչական կանոնագրի մշակման գործը դնում է գործնական դեռնի վրայ եւ նրա ջանքերը պսակուում են 1836 թ. «Պոլոժենիէյով»:

Այս «Պոլոժենիէն» իր բազում խոշոր պակասներով հանդերձ, անշուշտ մի դրական երեւոյթ էր հայ կեանքի մէջ, որի բնական կեանքը միանգամայն խաթարուած էր Պարսից ու տաճկական իշխանութիւնների ժամանակ: «Պոլոժենիէն» յամենայն դէպս մտցնում էր հայ հոգեւոր կեանքի մէջ մի որոշ կարգ ու կանոն, կանխում էր անձնական բռնազբօսիկ ելոյթները, որոնք անցեալում յաճախ տեղի էին ունենում, մասնաւորապէս Էջմիածնի միաբանութեան շարքերում. Մայր աթոռի գրամական գործերը որոշ հսկողութեան տակ էր դնում ու կանոնաւորում, եւ վերջապէս, որ գլխաւորն է, իրաւունք էր տալիս հոգեւոր բարձր կառավարութեան բաց անելու ծխական ու թեմական դպրոցներ: Մի խօսքով, հայ ժողովուրդը ստանում էր եկեղեցական-կրթական ինքնավարութիւն, ազատութիւն իր ներքին գործերի մէջ, բայց մերժուում էր ազգային պետականութիւն ստեղծելու իրաւունքը:

«Ճիշտ է, ասում է Լէօն, Պոլոժենիէն միմիայն լուսաւորչական Հայոց կեկեղեցուն էր վերաբերուում եւ միմիայն զուտ եկեղեցական հարցեր էր շօշափում, բայց եւ այնպէս, եթէ ի նկատի առնենք Հայ եկեղեցու կազմակերպութիւնը, նրա ոգին, դա միաժամանակ եւ ժողովրդական օրէնք էր, որ ահագին ազդեցութիւն ունեցաւ մեր պատմական ճակատագրի վրայ, սկսած իր գործադրութեան ժամանակից, շուտ տուեց, կարելի է ասել, մեր պատմութեան անիւը: Ռուսաց օրէնդրութեան մէջ Պոլոժենիէի միջոցով ընդունուում եւ պաշտօնական վաւերացում էր ստանում մի ամբողջ ժողովուրդ — «Հայկական ժողովուրդը» — որ ունի իրաւունքներ, ընտրողական քուէ, սեփականութեան իրաւունք: Բայց այս բոլորը լոկ Հայ լուսաւորչական եկեղեցու շուրջը, լոկ իբրեւ մի եկեղեցական համայնք[35]»:

Այսպէս, թէեւ — կրկնում ենք — մեր ազատագրութեան ռահվիրաների փայփայած երազները՝ ստեղծել ազատ ու անկախ Հայաստան, չիրականացաւ. հայ ժողովուրդը ճանաչուեց Նիկողայոս կայսեր օրով լոկ որպէս մի կրօնական համայնք, Երեւանի նահանգում, որի տակ հասկացւում էր ամբողջ Անդրկովկասի հայութիւնը, այսու հանդերձ Պարսից ու Տաճիկների գազանարարոյ իշխանութեան կործանումը եւ հայ ժողովրդի դարաւոր անհուն տառապանքների վերջ դանելը

[33] «Պոլոժենիէ»ի լրիւ վերնագիրն է՝ «Բարձրագոյն կանոնագրութիւն յաղագս կառավարութեան տան»:

[34] Տե՛ս Երիցեան, Հ. Բ., էջ 267:

[35] Տե՛ս էջ 116· Լէօն, Պատմութիւն Երեւանի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի», 1837—1912, Թիֆլիս 1914:

1828—1829 թթ. Ռուսաստանի տիրապետութեամբ, պատճառեց ամբողջ հայութեան անկարագրելի ուրախութիւն ու խանդավառութիւն:

Լէօն իր յիշեալ աշխատանքի մէջ բերում է ընդարձակ պատմական վկայութիւններ, որոնք ցոյց են տալիս, թէ ինչ աստիճանի էր հասել այդ օրերին Հայոց հրճուանքը՝ սկսած Խաչատուր Աբովեանից, Մեսրոպ Թաղիադեանից մինչեւ Հնդկահայերը:

Եւ քանի որ մեր այս համառօտ տեսութեան նեղ սահմաններից դուրս է ընդարձակ նկարագրութիւնը այդ խանդավառութեան, ուստի սահմանափակուում ենք միայն հետեւեալ մի-երկու փոքրիկ մէջբերումներով այդ վաւերագրերից, մի գաղափար տալու համար հայ ժողովրդի վրայ թողած տպաւորութեան մասին՝ Անդրկովկասի նուաճումից յետոյ Ռուսների կողմից:

Երեւանի 10 գիւղերի եւ Երեւան քաղաքի «առաջաւոր անձանց» գրութեան մէջ, ուղղուած «Առ սուրբ Էջմիածնի բարձրագոյն կառավարութիւնն» 1828 թ. յուլիսին, ասուած է ի մէջի այլոց.

«...Ի սրբազան հարցդ եւ ի նախնի պատմչաց մերոց լուեալ եւ ընթերցեալ եմք թէ Հայոց ազգն երեւելի թագաւորութիւն մի էր, ուրեմն ըստ բաւականին զօրք եւ ժողովուրդք պարտէին ունել, զի կառավարեսցէին զայնպիսի թագաւորութիւն: Այժմ բոլոր ի մէջ Հայաստանու Ատրպատականի հազիւ յիսուն հազար տնորէ գտանին ի Հայոց, մնացեալքն ցիր ու ցան եղեալ են ընդ ոլորտս տիեզերաց»:

«...Գոհանամք զԱստուծոյ եւ զսուրբ Պատկերէ Նորին Կայսերական Մեծութեան ամենայն Ռուսաստանու Նիկոլայ Պաւլովիչէն որ մենք, ի ներկայիս գտանեցեալ անարժան ծառայքս Աստուծոյ եւ հաւատարիմ հաւատացեալքս սուրբ կայսրութեան նորին անդրաւ ուրախութեամբ տեսաք եւ վայելեմք դյաւիտենական ազատութիւն մեր եւ որդւոց մերոց ի յանտանելի բռնութեանց եւ յայօրինաւոր հարկապահանջութեանց բարբարոսացն. ուստի մնացեալ Հայքս ի սահմանու Երեւանու գրով եւ բանիւ ճայն տամք ցրուեալ ազգիս մերոյ ի զանազան իշխանութիւնս եւ ի գաւառս բանիւ Սաղմոսին: Այսօր է զոր արար Տեր, եկեալ ժողովեցարուք, եղբարք մեր, ընդ հովանեաւ գայիսօնի Քրիստոսասէր Ռուսաց կայսերութեանն, ցնծասցուք եւ ուրախ լիցուք, զի այդ արար մեզ Բարձրեալն, ազատեցաք ի գերութեանց եւ դրօշակքն թագաւորութեանց մերոց ի ձեռս որդւոցն Հայկազնէից զարհուրեցուցանեն զնախաչար թշնամիս նոցին» եւ այլն:

Կալկաթահայերի գրութեան մէջ, 105 ստորագրութեամբ, ուղղուած Ներսէս Աշտարակեցուն, ասուած է հետեւեալը.

«...Զիարդ հեռաւորութիւն տեղւոյ խափան լիցի մեզ խոստովանել զերախտագիտութիւն մեր առ երկնակառոյց հզօր տէրութիւնն Մոսկովայ՝ որք ի սիրոյ բնութեան եւ քրիստոնէական կարեկցութեամբ շարժեալ՝ յառաջմատեան առ անկեալս յիւրեանց նախնական շքեղութեանց, եւ ձեռն տուեալ նոցա հանին զնոսա ի խաւարչին գրոյ անյոյս գերութեան ի լուսանորոգ վայրս ցանկալի ազատութեան...[36]»:

Բաց ենք թողնում Մադրասի հայերի, Թաղիադեանի գրութիւնները, որոնք նոյն ոգւով եւ ոչ պակաս խանդավառութեամբ են գրուած:

Հայ ժողովրդի այս հրճուանքն ու խանդավառութիւնը, որ ազատութիւն էր գտել դարաւոր սարկութիւնից, ի զուր չէին. նրա կաչկանդուած հոգեւոր եւ մտաւոր կարողութիւնները չղթայազերծուելով ու խաղաղ աշխատանքի հնարաւորութիւններ ձեռք ձգելով, զարմանալի կարճ ժամանակամիջոցում, ընդամենը 20—30 տարուայ ընթացքում, ձեռք բերեցին տնտեսական չօշափելի բարգաւաճում ու ցուցադրեցին մշակութային վերելք:

1855 թուի Ղրիմի պատերազմից յետոյ, յայտնի է, որ Ռուսաստանում, Ալէքսանդր Երկրորդ կայսեր օրով, սկսուեց մեծ բարեկարգումների մի սքանչելի ժամանակաշրջան, երբ գիւղացիութիւնը 1861 թ. փետրուար 19ին կայսերական հրովարտակով ազատագրուեց ճորտութիւնից, երբ մեծ բարենորոգումներ կատարուեցին դատաստանական կազմակերպութեան մէջ, երբ ժողովուրդը ստացաւ ներքին ինքնավարութիւն ի դէմս զեմստվոյական հաստատութիւնների, եւ երբ, վերջապէս, մամուլն ու գրականութիւնը մի որոշ չափով ազատութիւն ստացան արտայայտելու ու տարածելու ամենայառաջադէմ գաղափարներ:

Այս մտաւոր ազատարար շարժումը ունեցաւ իր փրկարար ազդեցութիւնը նաեւ հայ կեանքի վրայ: Բաւական է միայն մատ-

[36] Անդ, էջ 102 եւ 105:

© National Library of Armenia

նանչել, որ 1850ական թուականների երկրորդ կէսից սկսուեց այն մտաւոր մեծ շարժումը ամբողջ ռուսահայութեան մէջ, որ յայտնի է Վերածնութեան շրջան անունով եւ որի գլխաւոր ներկայացուցիչներն եղան՝ Սա. Նազարեանը, Միք. Նալբանդեանը, Սմբատ Շահազիզը, Դամառ-Քաթիպան եւ նրանց շրջապատող մի փայլուն փաղանգ մտաւորականների, որոնք մեծ զարկ տուին հայ լեզուի, հայ գրականութեան, հայ հրապարակախօսութեան զարգացման ու 19րդ դարի յառաջադէմ գաղափարների տարածման հայ կեանքի բոլոր ասպարէզներում:

Այս երեւոյթի պատճառների շարքում խոշոր դեր ունի թէ հայ ժողովրդի բնածին աշխատասիրութեան, տոկունութեան եւ ստեղծագործ ոգին եւ թէ այն հանգամանքը, որ Անդրկովկասը, ամայի ու խոպան Պարսից ու Տաճկաց իշխանութեան մռայլ օրերին, լցուեց հայ ազգաբնակութեամբ, մի ազգաբնակութիւն, որի բնական աճման թափն էլ միշտ եղել է զօրեղ:

Իսկ ազգաբնակութեան թիւն ու աճումը, յայտնի է, որ հանդիսանում է մի ժողովուրդի ընկերային, տնտեսական եւ մշակութային զարգացման ու յառաջադիմութեան գլխաւոր ազդակներից մէկը:

Այս տեսակէտից Արեւելեան Հայաստանը 1830 թուից յետոյ ներկայացնում էր մի շատ ուշագրաւ պատկեր:

Ըստ Դաւիթ Անանունի ուսումնասիրական տուեալների[37], 1830ական թուականներին միայն Անդրկովկասը ունեցել է շուրջ 300·000 հայ բնակչութիւն ընդկ եւ նորեկ գաղթականների հետ միասին:

Ըստ Մխիթար վարդապետի բերած վիճակագրական տեղեկութիւնների[38], 1902 թուին Հայերի թիւը Անդրկովկասի հինգ նահանգներում՝ Երեւանի, Կարսի, Դանձակի, Թիֆլիսի եւ Բագուի, կազմում էր մի պատկառելի քանակութիւն, այն է 1,292·00 հոգի կլոր թուով. ասել է թէ հազիւ 65—67 տարուայ ընթացքում Հայերի թիւը քառապատկուել էր:

Եզրափակելով մեր խօսքը ռուսական թափանցումի մասին դէպի Անդրկովկաս, մատնանշելով հայ ժողովրդի ունեցած զորաւոր մասնակցութիւնն այդ թափանցումի ընթացքին, եւ ապա նրա ազդեցութիւնը հայ կեանքի զարգացման վրայ, ասենք եւ այն, որ ռուս եւ հայ ժողովրդի այդ մերձեցումը միայն Հայերի համար չէր, որ մեծապէս շահաւէտ եղաւ, այլ եւ ռուս պետութեան եւ ռուս ժողովրդի համար:

Այս հանգամանքը դեռ 1865 թուին պարզել էր գեղեցիկ կերպով Լազարեան Ճեմարանի այն ժամանակի տեսուչ (հետագայում համբաւաւոր վերատեսուչ) Գէորգ Քանանեանը իր ընդարձակ ճառի մէջ, ասուած Լազարեան Ճեմարանի 50ամեակի առթիւ կայացած հանդիսաւոր հաւաքոյթում:

«Ռուս եւ Հայ ժողովրդների մերձեցումը, ասուած է այդ ճառի մէջ, արդիւնք էր մի կողմից ներքին ու կրօնական պատճառների, միւս կողմից քաղաքական ու սոցիալական նկատառումների:

«Հին Հայաստանի կարեւորագոյն կենտրոնները, կրօնական ու պետական — Արմաւիրն ու Արտաշատը, Սիւնիքը, Դւինը, Վաղարշապատն ու Էջմիածինը — ընկան պատմական ճակատագրի կամքով, ռուս միապետների իշխանութեան տակ: Հայ ժողովուրդը, որ 5 դար առաջ կորցրել էր իր քաղաքական անկախութիւնը, ընդմիշտ անքակտելի կապերով կապեց իր գոյութիւնը մի հզօր երկրի հետ, որի վեհութեան ու բարգաւաճման համար նա բերեց իր հետ բաւականաչափ պայմաններ:

«Ի սկզբանէ գերադասելով քաղաքացիական կեանքի յառաջադիմութիւնը ռազմական սխրագործութիւնների փայլից, ի սկզբանէ սիրելով փիլիսոփայական ու մտաւոր աշխատանքն ու նրա բարի արդիւնքները, նա իր նոր հայրենիքի մի շարք մասերում երեւան բերեց այն ոյժերը, որոնցից կախում ունի ամէն մի երկրի բարգաւաճումը: Նա իրանով բազմապատկեց այն տարրերը, որոնցով պայմանաւորուած է ամէն պետութեան կայունութիւնը: Հայ զանգուածները, որոնք մի դարի ընթացքում լցնում էին Ռուսաստանի սահմանները, չէին հանդիսանում մի պարզ քանակութիւն, երկրորդական արժէք ունեցող յաւելում չէր գոյութիւն ունեցող ժողովրդական ոյժերին: Նա բերեց իւր հետ նիւթական ու բարոյական հարստութիւն:

«Հայ գաղթականութիւնը ստրկութեան մէջ տանջուած մասսաների հետ միասին Ռուսաստան բերեց նաեւ իր լաւագոյն ոյժերը:

[37] Տե՛ս էջ 108· Դ. Անանունի, «Ռուսահայերի հասարակական զարգացումը 19րդ դարում», Հ. Ա. 1916:

[38] Տե՛ս էջ 135· Մխիթար վարդապետի, «Հայերը Ռուսաստանում», Վաղարշապատ 1906:

«Տառապող, տուն եւ ապաստան փնտռող գաղթականների հետ, Ռուսաստան հոսեցին հարստութիւն, ձիրք, առեւտրական փորձառութիւն եւ գործնական գիտելիքներ:

«Կարելի է շատ օրինակներ բերել այդ լաւագոյն ոյժերի հոսանքի դէպի Ռուսաստան: Բայց ամենապայծառ օրինակը մեր աչքի առջեւն է՝ կեանքն ու գործունէութիւնը այն տոհմի, որ իր անունը կապել է մեր դպրոցի հետ[39]»:

Ահա՛ այս տոհմի ներկայացուցիչների առաքինի ու փայլուն գործունէութեան պատմութեան էլ նուիրուած է մեր ներքոյ հատուած աշխատասիրութիւնը:

Լազարեանները իրենց ջերմ հայրենասիրութեան ոգով տոգորուած մի գործունէութիւն են ունեցել, որով անջնջելի հետքեր են թողել Հայոց պատմութեան փայլուն էջերում. էջեր, որոնց ընթերցումը լցնում է մարդու սիրտը ազգային պարծանքի վեհ զգացումով ու ակամայ մղում դէպի երախտապիտութիւն նրանց անմահ յիշատակի հանդէպ:

(Շարունակելի:)

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՓՈԽԱՌԵԱԼ ԲԱՌԵՐ ՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՋ

(Շարունակութիւն:)

Մուսանտարա (վն. մուսանդրա) «սենեակի մէջ դուրս ելած անշարժ պահարաններու վերեւի բաց մասը. եւրի գլուխ. ծալներու վերեւի մասը. հաղուագիտ բառ, որ պահուած է միայն մուսանտարան հանել ոճին մէջ՝ որ հոմանիշ է ծանոթ եզը դանակին ֆով տանիլ առածին, այսինքն «գիւրին բան մը դուր տեղը դժուարացնել»: Այս բառին թուրքերէն ձեւը կը տրուի ortasandara «մեծ պահարան», բայց բնաւ չունի թուրք բառի երեւոյթ եւ չի կրնար թուրք լեզուով ստուգաբանուիլ. ուստի կը կարծեմ թէ եւրոպական փոխառութիւն մը ըլլայ եւ այն՝ յատկապէս իտալ. mansarda (= ֆրանս. mansarde) բառէն, որ կը նշանակէ «տան ծածքի, այսինքն երդիկի տակ շինուած փոքր սենեակ, ծուռ եւ անկանոն առաստաղով»:

Ձեւի եւ նշանակութեան կողմէ դժուարութիւն չկայ եւ մեր նշանակութիւնը շատ յարմար է եւրոպականին: Բուն կասկածելի կէտն այն է միայն՝ որ յիշեալ բառը նոր է եւ ստեղծուած է առաջին անգամ ԺԷ. դարու կէսէն ետք, առնելով Ֆրանսացի նշանաւոր ճարտարապետ Hardouin Mansardի անունէն. այս անձը՝ որ ի մէջ այլոց շինած է Փարիզի մէջ Էնվալիտի գմբեթը, Վէրսայլի պալատը եւ Վանտոմի հրապարակը եւ կ՚ապրէր 1645—1708 թուին, առաջին անգամ գործածութեան մէջ մտցուց վերոյիշեալ սենեակները կտուրի տակ: Սակայն այս դժուարութիւնն ալ կրնանք վերցնել այն մտածութեամբ թէ աւելի նոր ժամանակի բառեր ալ, ինչպէս մավզէր, պէրտան հրացանները, պալ-յէմէզ թնդանօթը, պիսիքլէք, վէլօսիփէտ եւն շատ գործածական են մեր լեզուին մէջ:

Մուսթարտա «մանանեխ, հարտալ» < նյն. μουστάρδα, իտալ. mostarda:

Մուսթօ «նոր եւ դեռ քիչ մը քաղցր գինի» < իտալ. mosto, յն. μοῦστος «մաճառ, խաղմուզ, շիրա»:

Մուսլին «բամբակեայ շատ նուրբ կտոր մը» < ֆրանս. mousseline. տարբեր է իտալ. mussolino, mussolo նոյն նշ.:

Մօզայիք «մանրախիճ քարերով պատրաստուած գարդ» < ֆրանս. mosaïque. ձեւով տարբեր է իտալ. mosaico նոյն նշ.:

Մօլա «մի քիչ հանգիստ առնել՝ յետոյ գործը շարունակելու համար (մանաւանդ բեռնակիրներու լեզուով)», մօլա թաշի «այն բարձր քարը՝ որուն վրայ բեռնակիրները իրենց բեռը դնելով՝ յոգնութիւն կ՚առնեն» (թրք. طاش taš քար), թրք. مولا mola < իտալ. mola «մեծ քար, երկանաքար» կամ mollare «հանգչիլ, դադրիլ»:

Մօնօ «խաղաթուղթի մէջ մէկ նշանը, as» (գործածական է միայն Նոր-Նախիջեւանի բարբառով) < իտալ. mono «միակ»:

Մօնոփոլ «մենաշնորհ, մենավաճառութիւն» < ֆրանս. monopole. ձեւով տարբեր է իտալ. monopolio:

Մոպիլյա «կահ-կարասիք» < իտալ. mobilia:

Մոռքի ֆաշել «մեռնիլ» (ծաղրական ոճով):

Մոռքունի «դագաղը չալկելով տանելու համար վարձուած մարդ, մեռելակիր»:

Մոռօ «մեռեալ ննջեցեալ», մոռօ եղեր է «մեռեր է» < իտալ. morto «մեռած, մա-

[39] Տե՛ս էջ 14—15 «Ճառեր եւ հաշուետուութիւն, արտասանուած հանդիսաւոր հաւաքոյթում Լազարեան ճեմարանի 50ամեակի առթիւ» Գ. Քանանեանի ճառը: (Ռուսերէն լեզուով:) Մոսկուա 1865:

© National Library of Armenia